ԳԻՒՂԱՑՈՒ ԱՂՕԹՔԸ.

Քո Աջովն ենք, Տէր մենք ապրում,
Թէև մերերն են աշխատում.
Դու ես երկիրն բերրի դարձնում,
Իսկ մենք դուշտից տուն ժողովում։
Ամեն ինչ Քեզ փառք է կարդում,
Բայց մենք յայտնի չե՞նք տեսնում,
Որ Դու միայն ունկն ես դնում,
Երբ գործող ձեռքն է փառք կարդում։
Երկրի, երկնի Դու կառավար
Հացով խնամէ մեզ հայրաբար.
Առատութիւն ընդոց մեզ տուր,
Մեր ջանք, քրտինք, թող չլնեն զուր։
Երբ Քո հրաման կգայ բարձրից—
Շուտ հեռանալ մեզ այս երկրից,
Թող մեզ հանդչէլ, Հայր, Քո գոգում
Քեզ փառաբերել և Երկնքում։

Պանդո-ֆ.

ԱԶԳԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՃԵՄԱՐԱՆԻ.

Գերապատիւ Սրբազան Տեարք.

Այս հանդիսաւոր ժամիս, մինչ խմբուած ենք Ճեմարանիս բացման 11-երդ տարեդարձը տօնելու, պարտք եմ համարում համառօտակի տեղեկութիւն տալ Ձեզ, Մեծարու հանդիսականք, հաստատութեանս $18^{84}/_{85}$ ուսումնական շրջանի մասին։

Խօսքս չեմ երկարացնել Ճեմարանիս ուղղութեան, նպատակի և ծրագրի մասին, որովհետև յայտնի են. Ճեմարանիս ուղղութիւնն է և պէտք է լինի հոգևոր, նպատակը՝ տալ ազգին հայագէտ և կրօնագէտ կուսակրօն հոգևորականներ, քահանաներ և ուսուցիչներ։ Այս ուղղութեան և նպատակին յարմարեցրած է ուսման ծրագիրը, որ արդէն հրատարակեալ լինելով «Արարատ» ամսագրի մէջ և առանձին տետրակով՝ այստեղ հարկ չեմ համարում երկրորդել։

Նախակրթարանների փակմամբ՝ ճեմարանը կազմուած էր երեք մասնից, որք են. Դպրոցական, Դպրանոցական և Լատրանական։ Իւրաքանչիւր մասն բաղկացած էր երեքական դասարաններից, որոնց մէջ դասախօսւում էին

1. Արքիեպիսկոպոս՝ Արքիեպիսկոպոս Վարդապետ Դաւթեան, Կրօնական առարկայքը շաբաթական 15 դասով բոլոր դասարաններում։

Դպրոցական բաժնում դասախօսում էին՝

2. Արքիեպիսկոպոս՝ Յովհ. Վարդապետ Մովսիսեան, Հայերէն շաբաթական 16 դաս։

3. Շնորհնակ Սահակ Սարգիսեանց Ամասունի, Քերականութիւն շաբաթական 10 դաս։

4. Պ. Գէորգ Տէր Բարդուղիմէոսեան, Հայ և Ընդհանուր Պատմութիւն, Ընդհանուր Աշխարհագրութիւն, Գծագրութիւն և Նկարչութիւն, շաբաթական 20 դաս։

5. Պ. Աղէքսանդր Յարութիւնեան, Բնական պատմութիւն և Ռուսաստանի Աշխարհագրութիւն, շաբաթական 8 դաս։

6. Լեոն Խանասղեան, Ռուսաց լեզու, Ա. և Բ. դասարաններում, շաբաթ. 11 դաս։

7. Պ. Արամ Մելքեան, Թուաբանութիւն Ա. և Բ. դասարաններում, շաբաթական 7 դաս։

8. Ռոստոմ Ճէմարանի Քրիստափոր Տէր Վրթանէսեան, Վայելչագրութիւն Հայ և Ռուս Ա. և Բ. դասարաններում, շաբաթական 3 դաս։

Դպրոցական բաժնի Գ. դասարանում և Դպրանոցական բաժնում

9. Պ. Յովհաննէս Ղազարեան Ռուսաց լեզու շաբաթական 19 դաս։

10. Պ. Կարապետ Տէր Մկրտչեան, Թուաբանութիւն, Հանրահաշիւ, Եռանկիւնաչափութիւն և երկրաչափութիւն, շաբաթական 18 դաս։

11. Պ. Ռոբէն Ռոբինեան, Տաճկերէն լեզու շաբաթական 9 դաս։

Դպրանոցական բաժնում և Լատրաններում

12 Պ. Մանդէն Մանդինեան, Ընդհանուր և Ռուս գրականութիւն, Ընդհանուր և Ռուս պատմութիւն, շաբաթական 18 դաս։

13. Պ. Բիթլի Միխայէլ Զարգարեան, Բնական պատմութիւն, և Բնագիտութիւն, Առողջապահութիւն շաբաթական 12 դաս։

14. Պ. Սաֆիֆանոս Պալասանեան, Հայոց պատմութիւն և Ֆրանսերէն լեզու, շաբաթական 23 դաս։

15. Պ. Մկրտիչ Պալեան, Հայոց լեզու և Հայ գպրութիւն, շաբաթական 22 դաս։

Միայն լսարաններում

16. Պ. Վասակ Պապաջանեան, Պատմութիւն փիլիսոփայութեան, Բարոյական փիլիսոփայութիւն, Հոգեբանութիւն և Գերմաներէն լեզու, շաբաթական 19 դաս։

Ընդամենը շաբաթական 230 դաս։

Ուսուցիչներից դասերին բացակայել են յընթացս տարւոյն

1. Արիստակէս վարդապետ	10	անգամ
2. Յուսիկ վարդապետ	4	«
3. Սահակ Սարկաւագ	15	«
4. Մ. Պալեան	12	«
5. Վասակ Պապաջանեան	61	«
6. Մանդէն Մանդինեան	6	«
7. Բժ. Միքայէլ Զարգարեան	35	«
8. Կարապետ Տէր Մկրտչեան	3	«
9. Ռուբէն Ռուբինեան	2	«
10. Լեւոն Խանդաղեան	13	«
11. Աղէքսանդր Յարութիւնեան	2	«
12. Արամ Մելեան	15	«
13. Յովհաննէս Ղորղանեան	29	«

Յընթացս տարւոյն բացակայութիւնք 207

Մեծապատիւ Պ. Պ. Պալասանեան և Տէր Բարդուղիմէոսեան բոլորովին չեն բացակայել։

Ճեմարանի Տեսուչն էր Գերապատիւ Տ. Գրիգոր Սրբազան եպիսկոպոս Ադափիրեան, աւագ վերակացու Արժանապատիւ Ղեւոնդ վարդապետ Յովակիմեան։

Վերակացուքն էին շնորհունակ սարկաւագունք Սահակ և Եփրեմ և պ. պ. Աղէքսանդր Յարութիւնեան և Արամ Մելեան, որոնք օր ընդ մէջ զոյգ զոյգ վարումէին վերակացութեան պաշտօնը։

Վարչութեան Քարտուղարն էր շնորհունակ Եփրեմ սարկաւագ, իսկ ուսուցչական ժողովի քարտուղար՝ արժանապատիւ Յուսիկ

վարդապետ։ $18^{84}/_{85}$ ուսումնական շրջանին ճեմարանում կանոնաւոր դասաւանութիւնն սկսուել է անցեալ 1884 թ. Հոկտեմբերի 5-ին և քննութեանց համար դասերը ընդհատուել են տարւոյս Մայիսի 18-ին։ Ամբողջ շրջանի մէջ տօների առիթով արձակուրդ է եղել 25 օր, ըստ այսմ՝

Ա. Սուրբ Ծննդեան տօնի համար Դեկտ. 29 – 8 յունվարի – 10.
Բ. Բարեկենդանի համար Յունվար 26 – 5 Փետրվարի – 9.
Գ. Ս. Յարութեան տօների համար մարտի 20 – 26 – 6.

Ընդ ամենայն 25.

Տարուայ մէջ եղել են 3 գրականական հանդէսներ և այն՝ Ս. Թադէոս և Բարդուղէմէոս առաքելոց, Ս. Սահակ Պարթևի և սրբոց Վարդանանց զօրավարաց տօներին, մի և ևս տխուր հոգեհանգստեան պաշտօն հանգուցեալ ի Տէր Ներսէս սրբազան Պատրիարքի մահուան առիթով։

Ճեմարանում տարուայ ընթացքում եղել են գիշերօթիկ աշակերտ՝ 181
Երթևեկ աշակերտ՝ 51

Ընդ ամենայն 235։

Բաժանուած դասարանների վերայ ըստ այսմ.

Ա.	դասարան	24 գիշերօթիկ	և 24 երթևեկ	. . .	48.
Բ.	«	34 «	« 17 «	. . .	51.
Գ.	«	26 «	« 7 «	. . .	33.
Դ.	«	40 «	« 2 «	. . .	42.
Ե.	«	25 «	« 1 «	. . .	26.
Զ.	«	12 «	«	. . .	12.
I.	Լատարան գիշերօթիկ	8	. . .	. . .	8.
II.	« «	6	. . .	. . .	6.
III.	« «	9	. . .	. . .	9.

Ընդ ամենայն 235 աշ.

Քննութիւններից յետոյ հետևեալ արդիւնքը երևեցաւ. գիշերօթիկ աշակերտք

	Ա.	Բ.	Գ.	Դ.	Ե.	Զ.	I. Լ.	II. Լ.	III. Լ.	
Փոխեցին	14.	24.	17.	23.	23.	11.	7.	5.	9.	134.
Քննելի	8.	9.	7.	14.	1	«	«	«	«	39.
Մնացին	1.	1.	2.	«	«	«	«	«	«	4.
Արձակուեց	1.	«	«	3.	1.	1.	1.	1.	«	7.
	24.	34.	26.	40.	25.	12.	8.	6.	9.	181

	Երթևեկ աշակերտք									
	Ա.	Բ.	Գ.	Դ.	Ե.	Զ.	I. Լ.ա.	II. Լ.ա.	III. Լ.ա.	
Փոխեցին	4.	5.	2.	.	1.	.	.	.	.	12
Մնացին	5.	1.	2.	.	.	.	.	.	.	8
Արձակուեց.	4.	7.	.	1.	.	.	.	.	.	12
Քննելի	11.	4.	3.	1.	.	.	.	.	.	19
	24.	17.	7.	2.	1.	.	.	.	.	51
Ընդհ. գ.	48.	51.	33.	42.	26.	12.	8	6	9	235

Այսպէս ուրեմն 181 գիշերօթիկներից 135ը փոխումեն, 39ը քննելի են մնում, 4ը դասարանումն են մնում, իսկ 7ը արձակվում. այն ինչ 51 երթևեկներից 12ը փոխում են, 19ը քննելի, 8ը դասարանումն են մնում, իսկ 12ը արձակվում։ Համեմատութիւնը որչափ որ մխիթարական է գիշերօթիկների համար, այնքան և ս վհատեցուցիչ երթևեկների համար, և ապացուցանում է ճեմարանի Վարչութեան նախանձելի հոգացողութիւնը իւր գիշերօթիկ սաների վերայ, իսկ ծնողաց կամ բարեկամների վհատեցուցիչ անհոգութիւնը դէպի իրանց սնուցած երթևեկ աշակերտները։

Այս տարի աւարտել են ճեմարանիս դասընթացքը հետևեալ ինն ուսանողներ, որք են

1. Խաչատրեան Առուստամաւուր՝ Ուշքիլիսեցի (Տաճկաստան)
2. Խաչատրեան Մանուկ Աստապատցի.
3. Հախնազարեան Մարտիրոս Ագուլեցի.
4. Մելիք-Նահնազարեան Սողոմոն Շուշեցի.
5. Մուրատչեան Նիկողայոս Քիշնեւցի.
6. Յովհաննիսեան Տիգրան Երևանցի.
7. Սուլթան-Նահեան Մելքոն Նոր-Նախիջևանցի.
8. Տէր Յակոբեան Տիգրան Տաթևացի.
9. Տէր Վրթանիսեան Քրիստափոր Ադրիանուպոլցի։

Իբրև բարեգուշակ դէպք ի հաւաստիս երախտագիտական զգացմանց ուսումնասիրաց ուսանողները խնդրեցին Սրբազան Սինոդից մի տարի ձրիաբար ծառայել ճեմարանում և բարեբաղդաբար խնդրատուներից Մանուկ Խաչատրեան և Մարտիրոս Հախնազարեան հրաւիրուած են վերակացութեան և դասատուութեան համար. Քրիստափոր Տէր Վրթանիսեան առատաձեռն և նախանձելի ասասրութեամբ բարերար գնդապետ Աղէքսանդր

Մելիք-Հայկազեանի գնաց տրտասահմանն, իսկ մնացեալներին մինչև կըլինէին Ճեմարանիս վարչական փոփոխութիւնները հնար չեղաւ միջոց տալ նոցա փափագը կատարելու իրանց հեռաւոր հայրենիքները գնացած լինելուն համար։

Ճեմարանիս առողջական վիճակը 188⁴/₅ շրջանին շատ գոհացուցիչ է եղել. ծանր հիւանդներ բացի երկուսից չեն եղել, և այդ ծանր հիւանդներն ևս աչալուրջ հսկողութեամբ և հմտութեամբ բժիշկ Պ. Միքայել Զարգարեանի, ողորմութեամբն Աստուծոյ անյուսալի դրութիւնից առողջացել են։ Ս. Էջմիածնի Մայր Աթոռը ազգի մանուկներին բարոյապէս և նիւթապէս սնուցանելու հոգսը ստանձնելով, նոցա առողջութեան համար ոչինչ չի խնայել ունենալով գեղանոց, հիւանդանոց և հմուտ բժիշկ։

Վերջացնելով այս համառօտ տեղեկագիրը անցեալի համար մնում է ինձ ապաւինել Աստուծոյ ողորմութեանը, որ ինձ հաւատացած այս մեծ և վսեմ գործը կարողանամ առաջ վարել օրհնութեամբ Վեհափառ Կաթուղիկոսի, քաջալերութեամբ Սրբազան Սինոդի և բարի տրամադրութեամբ միաբանութեան Ս. Էջմիածնի և Հայ հասարակութեան։ Մնում է ինձ ապաւինել Աստուծոյ ողորմութեանը, որ աջակցութեամբ յարգելի ուսուցչաց, Արժանապատիւ աւագ վերակացուի և պատուարժան վերակացուների՝ կարողանամ արդար և հանգիստ խղճմտանքով իմ գործոց և հաշիւը տալ։

Յարգելի հանդիսականներ, մնում է մեզ բոլորիս միասիրտ-հուրդ դիմել առ Աստուած, որ նա իւր բարերարութեամբը իմաստութիւն, զգօնութիւն, ոյժ և կարողութիւն տայ Ճեմարանիս մէջ գործող բոլոր անձանց, ուշիմութիւն ու խոհեմութիւն տայ աշակերտներին և հաստատ պահէ Ազգն ու Մայր Աթոռն Հայոց Ս. Էջմիածին, որոնց շնորհիւ գոյութիւն ունի Ճեմարանս։ Ամէն։